

# Տ. ՏԻՐԱՆ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(9 դեկտեմբերի 2004 թ.)

*«Այսօր լցա խոստումն Աստուծոյ առ նա-  
հապետուն ի զառակէ նոցին օրհնիլ ամենայն  
ազգաց»:*

(Շարակնոց)

Ահա այսպիսի սրտաբուխ պարկերներով և հոգեթափանց հուզականությամբ է արտա-  
հայտվում սրբազան շարականագիրը այն մեծ իրադարձության մասին, որ մեկ բառով կոչ-  
վում է խոստում: Ի՞նչ էր ասվածային այդ խոստումը. սրանից երկու հազար և ավելի տա-  
րիներ առաջ, ինչպես մեզ վկայում է մեր եկեղեցական սրբազան ավանդությունը, հրեական  
փոքրիկ մի քաղաքում բարին Աստված, անսպռն հավաքարհիմ իր ծառաների՝ ամուլ Նովա-  
կիմի և Աննայի թախանձագին խնդրանքներին, Իր ամենաառաքողորմությամբ այցելում է  
նրանց:

Եթե երադարձ մի հայացք նետենք Հին Կտակարանի վրա, ապա դարձյալ կհանդի-  
պենք նմանաբնույթ շատ ու շատ պարամությունների: Նույն խոստումն է փրվում նաև  
Աբրահամին և Սառային, Մամվել մարգարեի ծնողներին, Եղկանային ու Աննային: Ինչպես  
տեսնում ենք, թվարկված բոլոր պարագաներում էլ ամուլ ծնողներն Աստուծոց խոստացված  
զավակներ են ունենում, սակայն մեզ՝ քրիստոնյաներիս համար մանավանդ անբաղդատելի  
է Տիրոջ՝ Նովակիմին և Աննային փրված անգերագանց խոստումը. քանզի, ինչպես կասեր  
շարականագիրը, ամուլ երկրից այսօր մեզ համար աճեց բարեբեր բույսը բարի, հովիտների  
շուշանը և դաշտերի ծաղիկը՝ Ամենասրբունի Կույսը:

Միքելի հավաքացյալներ, անշուշտ այս այն մեծահրաշ ու եզակի ծնունդն էր մարդկութ-  
յան պարամության մեջ, որ արմատապես հեղաշրջեց այն՝ դնելով մի նոր բարձրության վրա:  
Այս ծնունդն էր այն բաղձալի հուսո, այն խոստման անխորտակելի գրավականը, որ փրվել  
էր Աստծու կողմից մեր հայրերին: Այս ծնունդն էր, որ ունեցավ և առաքապես բաշխեց այն  
բոլոր հարկություններն ու առաքինությունները, որոնք անհրաժեշտ են սրբության հասնե-  
լու համար: Սուրբ Կույսի աշխարհ գալով էր, որ համբերությունը և Աստծու կամքին համա-  
կերպությունն իրենց ողջ ուժգնությամբ արտահայտում են իրենց:

Աստվածորդու մարդեղացումից հետո Քրիստոսի փնտրինական և քավչարար գործու-  
նությանն իր գործուն մասնակցությունն է բերում Սուրբ Կույսը: Դա անշուշտ բխում է նրա  
մայրական իրավունքներից, և վերջապես հավաքացյալի ցավն ու ակնկալությունները Տի-  
րոջը հասցնող, աղոթողի ձայնին ունկնդիր, նրա համար Տիրոջը բարեխոսող էակ է Ամենա-  
սրբունի Կույսը: Մայրական իր անսահման գթով ու քնքշությամբ նա Տիրոջից ողորմություն  
է հայցում յուրաքանչյուրիս համար:



«Փառատրեալ եւ օրհնեալ միշտ Սուրբ Կոյս Աստուածածին, Մարիամ Մայր Զրիսարտի, մարո՛ղ զաղաչանս մեր Որդոյ քոյ եւ Աստուծոյ մերոյ» այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից, ամեն: